



Ինքնորոշման ծրագրի կողմնորոշման Գրանցման քայլեր (Steps to Enrollment)

Ահա այն քայլերը, որոնց հետևելով կարող եք գրանցվել Ինքնորոշման ծրագրին:

- 1. Այցելե՛ք կողմնորոշման որևէ հանդիպման:
- 2. Ընտրե՛ք, թե ինչպես եք ցանկանում ստանալ ձեր շրջանային կենտրոնի ծառայությունները:
- 3. Եթե ցանկանում եք գրանցվել Ինքնորոշման ծրագրին, տեղեկացրե՛ք այդ մասին ձեր շրջանային կենտրոնի ծառայությունների համակարգողին:
- 4. Որոշե՛ք, թե Ինքնորոշման ծրագրում ում եք ցանկանում, որ օգնի ձեզ:
- 5. Չարգացրե՛ք ձեր՝ **Անձի վրա կենտրոնացած պլանը**, եթե ցանկանում եք:
- 6. Հանդիպե՛ք ձեր IPP (Անհատական ծրագրի պլան) թիմի հետ, որպեսզի թարմացնեք ձեր IPP-ն և զարգացնեք ձեր **անհատական բյուջեն**:
- 7. Մշակե՛ք ձեր **ծախսերի պլանը** և սկսե՛ք անձնակազմի և մատակարարների ընտրության գործընթացը, ովքեր կաջակցեն ձեզ:
- 8. Աշխատե՛ք ձեր Ֆինանսական կառավարման ծառայության և նաև անկախ ֆասիլիտատորի հետ՝ ձեր ծախսերի պլանը վերջնականացնելու նպատակով:
- 9. Համոզվե՛ք, որ ծառայությունները թույլատրվել են շրջանային կենտրոնի ֆինանսական համակարգերում:
- 10. Սկսե՛ք ծառայությունների ստացումը՝ Ինքնորոշման ծրագրի միջոցով

Ինքնորոշման ծրագրի կողմնորոշման մասին լրացուցիչ տեղեկություններ (More Self-Determination Program Orientation)

Առկա են լրացուցիչ մոդուլներ, որոնք կարող են ձեզ ավելի շատ տեղեկատվություն և աջակցություն տրամադրել ձեր ծառայություններից օգտվելու հարցում՝ սկսած SDP-ից: Ստորև տրված հղումով կարող եք գրանցվել դասընթացներից որևէ մեկին: Այս դասընթացների մասին ավելին իմանալու համար կապվեք SCDD-ի շրջանային գրասենյակի հետ (վերը նշված):

SCDD-ի նահանգով մեկ առկա SDP-ի դասընթացների կայքէջ՝ <https://scdd.ca.gov/sdp-orientation/>

Դասընթացի լրացուցիչ մոդուլները ներառում են անձի վրա կենտրոնացած պլանավորում, անհատական բյուջե, ծախսերի պլան, ծառայությունների կազմակերպում և գրանցում: